

2 ՅՈՒՆԻՍ 451-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԱՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԵՒ ՕԳՆԱԿԱՆ ԶՕՐԱՎԱՐՆԵՐԸ

ՊԱՏՃԱՌՆԵՐ - ԱՆՁԵՐ - ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

Ներկայ դրութիւնը քննականի հանդա-
մանը չունի, եւ ոչ ալ պատմական դէպքի
մը շուրջ անձերու ու թուականներու ման-
րամանութիւններ հայթայթելու նպա-
տակ, այլ վերապրում մը հայ դոյութեան
համար տեղի ունեցած դէպքի մը, մղուած
հերոսամարտի մը, ուր հակառակորդ ու-
ժերու ջանքերի մեծամասնութիւնը թէեւ
պարտութեան մատնեց հայկական փոքրա-
թիւ բանակ մը, բայց միայն մէկ օրուան
համար, եւ թշնամին չկրցաւ իր վերջին
խօսքը ըսել հայ դոյութեան մասին:

Ժողովուրդներու տիեզերական պատ-
մութեան մէջ այդ օրէն ասդին դրուեցաւ
թէ ուժի քաղաքականութիւնը ամէն ան-
գամ պայման չէ վերջնական յաղթանակի,
եւ թէ դադարարին դիմադրականութիւնը
կրնայ յղենքնել ոյժը:

Հոս պիտի նկատենք վարդանանց պա-
տերազմը իր նախորդ ու հետեւորդ դէպ-
քերով, ժամանակակից զլխաւոր անձնա-
ւորութիւններով, մեղի առաջնորդ ունե-
նալով այս դէպքերուն միակ պատմական
աղբիւրները - Եղիշէն եւ Ղազար Փարպե-
ցին¹: Պիտի նկատենք զայն մանաւանդ
նազմական տեսակէտէ, անոր առաջնորդ-
ները, քաղաքական ու եկեղեցական իշխա-
նութիւններու կողմէ անոր մասնակցու-

1 Եղիշէ վարդապետ «Վասն վարդանայ եւ Հա-
յոց պատերազմին», Տպ. Վենետիկ, 1950: - Ղա-
զար Փարպեցի «Պատմութիւն Հայոց եւ թուրք
առ վահան Մամիկոնեան», Վենետիկ, 1933:

թիւն բերողները, նահատակները, եւ
հուսկ վերջնական հետեւանքը:

1 - ՀԱՅ-ՊԱՐՍԿԱՆ ԲԱՆՈՒՄԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հայաստան իր աշխարհագրական դիր-
քին բերումով տեւական կռուականներն էր
պարսկական եւ բիւզանդական կայսրու-
թիւններուն միջեւ: Մեր թագաւորին Ար-
շակ Գ. ի օրով (378-386) Հայաստան եր-
կուքի կը բաժնուի՝ Պարսից Շապուհ Գ. ի
եւ Բիւզանդիոնի Վաղէս կայսեր միջեւ:
Պարսիկներու կողմէ Սուրէն զօրավարը կու-
ղայ եւ կը դրաւ Հայաստանի Արարատ-
եան նահանգը եւ լաւագոյն ու մեծագոյն
մասերը, եւ այս Պարսկահայաստանի վը-
րայ թագաւոր կը դրուի Սուրով Գ.: Իսկ
յունական բաժնին վրայ կը մնայ նախկին
թագաւորը, Արշակ Գ. որ Սուրովի հետ
կուրի ընթացքին կը մեռնի, եւ Բիւզան-
դիոնի կայսրը, Թէոդոս Մեծ, օգտուելով
առիթմին կը վերցնէ հայ թագաւորութիւնը,
զայն փոխանակելով յոյն կառավարչով
մը «Կոմս Հայաստանի» տիտղոսով: Պարս-
կական բաժնին վրայ կը շարունակէ գեռ-
քիչ ատենուան համար մնալ հայ թագա-
ւորութիւնը: Սուրով Գ. իր անկախ ձեռ-
նամբներուն համար կը դաժադրուի պար-
սիկ արքունիքէն, եւ իրեն կը յաջորդեն
Վոամշապուհ (391-414), Շապուհ (Յաղ-
կերտ Ա. ի որդին), Արտաշէս Գ. (422-
428), որուն դահլիճեցութեամբ Պարսից
Վոամ Ե. ի կողմէ՝ վերջ կը դառնէ մեր թա-
գաւորութիւնը, հայ Արշակունիներու տէ-

րութիւնը (52-428) եւ պարսկական բա-
ժնին ալ կը սկսի կառավարուիլ պարսիկ
«Մարզպաններով», որոնց առաջինը կ'ըլ-
լայ խաղաղասէր Վեհափէրշապուհ: Կը
կորսնցնենք թագաւորութիւնը, բայց տա-
կաւին հայկական բանակը կը մնայ տէրը
երկրին, եւ հայ նախարարները տէր ու
ինքնիշխան իրենց նահանգներուն:

Պարսիկ դահին վրայ կը բարձրանայ
Յաղկերտ Բ. որուն յետագայ գրգռիչ եւ
բիրտ ուժի քաղաքականութիւնը դուռը կը
բանայ հայ - պարսիկ բախումներուն:
Յաղկերտ իրեն հաղարապետ կամ առաջին
խորհրդական կ'առնէ խորամանկ ու հե-
տադող պարսիկ մը, Միհրանես, որ
բաւական ժամանակ Տիգրանի քաղա-
քականութեան առանցքը կը դառնայ: Զա-
քաւանութեան առանցքը կը դառնայ:
Երբեք խմբակը չուտով իրար կը դառնէ:
Միհրանես իր կարգին կը դառնէ հայ մը,
Վարդապետ մը (Սիւնիքէն), որ վասակ
Սիւնիի աղջիկը կնութեան առած էր: Ա-
մուսնութենէն քիչ յետոյ կը սկսին ընտա-
նական անհամաձայնութիւնները, եւ աղ-
ջիկան անհամաձայնութիւնները, եւ աղ-
ջիկան հայրը, վասակ Սիւնի, ժամանակա-
կից Մարզպանը Հայաստանի, երկրէն
հեռու կը վտնոյ իր փեսան, վարդապե-
տը, որ կ'երթայ ապաստանիլ Միհրանե-
սէի մօտ, դաւանափոխ կ'ըլլայ դէպի զը-
րազաշտական կրօնը, եւ հոն կ'ապրու-
ի երկրին վնասով: Յետագային վարադ-
պետին ճամբան պիտի բռնէ, մանաւանդ
թէ պիտի դերադանցէ, զինքը վաճառող ա-
նեհ հայրը, վասակ Սիւնի: Եւ այսպէս ըն-
տանի թշնամիներ կը սկսին գործակցիլ
արտաքին թշնամիին՝ մեր երկրը քանդե-
լու²:

Յաղկերտ իր թագաւորութեան առաջին
տարիները սիրով եղած էր հայերուն հան-
դէպ, եւ վարդան ու հայ նախարարները

սիրով գործակցած էին իրեն, իր զինուո-
րական լաւագոյն ոյժը կազմած եւ փա-
ռաւոր յաղթանակներ ապահոված իրեն:
Բայց ատելութիւններ, փառասիրական
ձկտումներ, եւ մանաւանդ մոգական մո-
լեռանդութիւնը կը փոխեն Յաղկերտի քա-
ղաքականութիւնը:

Արեւմուտքէն Յաղկերտ սահմանակից
ունի «Հոռոմները», բիւզանդական կայս-
րութիւնը, որ բոլորովին ապահովութիւն
չի տար իրեն, հակառակ անոր որ Բիւզան-
դիոնի քրիստոնեայ անուն կայսրները,
«Երանելի» եւ «Խաղաղասէր» կոչուած
Թէոդոս (Փոքրը) եւ իր հետեւորդ յաջորդ-
ները թոյլ ու վախկոտ քաղաքականու-
թեան մը կը հետեւին, եւ կը խուսափին
հայերուն համար Տիգրանի հետ թշնամա-
նալէ³:

Տիգրանի մէջ Յաղկերտ ու Միհրանես
զուրկ գլխի կը խորհին հայկական վտան-
գի մասին: Հայերը իրենց քրիստոնեայ
կրօնքով միշտ հակումներ ունին դէպի
քրիստոնեայ Բիւզանդիոնը: Գրեթե զիւ-
րապետական ուշադրութենէն: Այս մտայ-
նութեամբ աճած սերունդ մը իր քրիս-
տոնեայ դրացիին հետ միասնաբար, օրին
մէկը, կրնային վտանգել պարսկական
կայսրութիւնը: Հետեւաբար Հայերը վերջ-
նականապէս ձերբազատելու համար Բիւ-
զանդիոնի քաղաքական աղդեցութենէն -
կը թեւադրէր Միհրանես Յաղկերտի -
հարկ էր դանոնք նախ ձերբազատել կրօ-
նապէս, զրադաշտական կրօնքին յաջաւը-
ջելով դանոնք: Կրօնքի միութիւնը պար-
սիկներու եւ հայերու, առաջ պիտի բերէր

2 Եղիշէ, էջ 172:

3 Ղ. Փարպեցի, էջ 115-125: - Եղիշէ, էջ 252:

4 Ղ. Փարպեցի, 231-233: - Եղիշէ, 13, 22-23,
139-141:

Բ. - ՊԱՐՍԻԿՆԵՐՈՒ ԿՈՂՄԷՆ

1 - Յագիկերտ Բ. - Պարսկաստանի Ար-
քայից արքան, որուն օրով ու պատճառով
սկսան ներկայ հայ-պարսկական բախում-
ները: Իր հրամանով սկսաւ դործադրուիլ
հայերը զրադաշտականացնելու ծրագիրը,
զանոնք անջատելու նպատակով քրիստոնե-
այ Բիւզանդիոնի քաղաքական ազդեցու-
թեանէն: Իր այս ծրագիրը Յագիկերտ ուղեց
գործադրել նախ «Բերտ ուժի» եւ յետոյ
«սիրով նուաճելու» քաղաքականութեամբ,
բայց երկուքով ալ ձախողեցաւ: Իր հրա-
մանով նահատակուեցան հայ զինուորա-
կանները եւ եկեղեցականները: 17 տարի
տեւեց իր թագաւորութեան շրջանը:

2 - Միհրնքսեհ - Յագիկերտ Բ.ի Հա-
ղարապետը եւ Առաջին խորհրդականը, եւ
առանցքը անոր քաղաքականութեան, Ընդ-
հանուր Սպարապետ պարսկական բանակ-
ներուն, եւ լիազօրը կայսրութեան:

3 - Մոգպետ - Ջրադաշտական դենին
(կրօնքին) քահանայապետը եւ ամէնէն հը-
մուտը, եռանդուն հաւատացեալ բայց ի-
րատես: Հայերուն զրկուած նամակ-հան-
դանակին շարադրողը: Բանտուած Ղե-
ւոնդեան քահանաներու հերոսական համ-
բերութենէն սքանչացած՝ քրիստոնեայ կը
դառնայ, կը մկրտուի նոյնինքն Ղեւոնդ-
եաններէն, եւ Յագիկերտի հրամանով կ'ան-
յայտացուի:

4 - Վեհեմեշապուհ (Դեմեշապուհ) - Ար-
քունի Ամբարկապետ, հարկերու դանձիչ
Հայաստանի, եւ դատաւոր ու նահատա-
կող Ղեւոնդեան քահանաներու:

5 - Մուշկան Նիւսապաւուրտ - Ընդհա-
նուր Հրամանատար Արտաղի ճակատա-
մարտին պարսկական բանակներուն:

6 - Սեբուխտ Նիխրապան - Հրամանա-
տար «Ճորայ Պահակին» (Աղուաններէն -
Կովկաս ու դէպի Հայաստան իջնելու լեռ-
նանցքը):

7 - Պերոզ - Յագիկերտ Բ.ի կրտսեր որ-
դին, որ սպաննելով իր երէց եղբայրը կը
յաջորդէ իր հօր: Իր հօրմէն աւելի խոհեմ
ընթացք մը կը բռնէ հայերուն հանդէպ:
Հինգ տարի իր քով պահելով Հայ նախա-
րարները, ոչ իբր բանտարկուածներ այլ
իբր գործակիցներ, իր թագաւորութեան
ծրող տարին բոլորովին ազատ կ'արձակէ
զանոնք որ վերադառնան իրենց տունները:
Իր օրով Հայաստան կը տիրանայ իր խղ-
ճի ու կրօնական պաշտամունքի կատար-
եալ ազատութեան, ինչպէս նաեւ բաւա-
կան լայն քաղաքական ազատութեան մը՝
Վահան Մամիկոնեանի Մարզպանութեան
տակ:

3 - ՊԱՐՍԿԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ ՀԱՅ
ԱԻԱԳԱՆԻՒՆ - ԿՐՕՆԱ - ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԺՈՂՈՎ ԱՐՏԱՇԱՍԻ ՄԷՋ ԵՒ ՀԱՅԿԱ-
ԿԱՆ ՎԵՐՋՆԱԳԻՐ-ՊԱՏԱՍԽԱՆԸ

Դենչապուհ պարսիկ գործակալը Հա-
յաստան զրկուած է, Հայերը զրադաշտա-
կանացնելու նպատակով: - Նախարարա-
կան տուններէն ներս երկպառակութիւններ
կը սկսին սերմանուիլ, սովորականէն ա-
ւելի կը ծանրանան ժողովուրդին վրայ
դրուած հարկերն ու տուրքերը, հարկեր
կը դանձուին նոյնիսկ եկեղեցիներէն ու
եկեղեցականներէն, մինչեւ այն օրը ազատ,
եւ նոյնիսկ աւերակներէն: Այս բոլորը այն
դիտումով, որ աղքատացած ժողովուրդ մը
իր տիրոջ ոտքը պիտի դայ, բայց կը ձա-
խողի պարսիկին հաշիւը: Հայ ժողովուրդը
իր արտադրիչ աշխատանքով կը գերնայ
ուսկից եւ ինչպէս վճարել Դենչապուհի
բոլոր պահանջները, բայց անոր չի խո-
նարհիր: Դենչապուհ յուսահատ տեղեկա-
գիրներ կը հասցնէ Տիգրոն: Միհրնքսեհի
իմաստութեան պաշարը վերջացած է, ու-
րիշ միջոց չկայ:

Նիստի կը հրաւիրէ պարսիկ մողերն ու
իմաստունները Միհրնքսեհ, կը շարա-

դրուի զրադաշտական հաւատքի հանդա-
նակը վերջնագրի ձեւով, եւ Հայաստան կը
զրկուի Հայ Աւագանիին ուղղուած, որ
պէտք էր կա'մ նամակին պատասխանել
բառ առ բառ, եւ կամ պարսկական Գերա-
դոյն խորհուրդին ներկայանալ Տիգրոնի
մէջ:

Այն ատեն Հայ Աւագանիին խնդրանքին
վրայ՝ Հայաստանի բոլոր նահանգներէն
ու գաւառներէն Արտաշատ կը հաւաքուին
Հայ Եկեղեցականութեան բոլոր ներկայա-
ցուցիչները - Կաթողիկոս, Եպիսկոպոս-
ներ, Երէցներ ու Վանահայրեր, դամարե-
լու համար կրօնա-քաղաքական Գերադոյն
լու համար կրօնա-քաղաքական Գերադոյն իր
ժողովը, ուր բովանդակ Հայ ազգը իր
ներկայացուցիչներուն բերնով պիտի պա-
տասխանէր պարսկական վերջնագրին՝
վերջնագրի ձեւով¹²:

Արտաշատի ժողովին մասնակցող

Ա. - ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ

- 1 - Յովսէփ Կաթողիկոս (տակաւին տե-
ղապահ)
- 2 - Անանիա Եպիսկոպոս Սիւնեաց
- 3 - Մուշէ Եպիսկ. Արծրունեաց
- 4 - Սահակ Եպիսկ. Տաթևի
- 5 - Սահակ Եպիսկ. Ռշտունեաց
- 6 - Մելիտէ Եպիսկոպոս Մանգլիքտի
(Մարձկերտի)
- 7 - Եզնիկ Եպիսկ. Բագրեւանդի
- 8 - Սուրմակ Եպիսկ. Բգնունեաց
- 9 - Թաքիկ Եպիսկ. Բասենի
- 10 - Երեմիա Եպիսկ. Մարդաստանի

11 Եղիշէ, 45-51: - Ղ. Փարպեցի, 130-132:

12 Եղիշէ, 51-76: - Ղ. Փարպեցի, 132-139: -

Եղիշէ միայն Եպիսկոպոսներուն անունները կը յի-
շատակէ: Կաթողիկոս Եղիշէ Մարդապի Եպիսկո-
պոսը, իսկ չի յիշեր Թիւ 16-ի Զաւէն Մանգլիքի
եպիսկոպոսը:

13 Եղիշէ, էջ 52, քաղաքական իշխանութիւննե-
րու մասնակցութիւնը անունով չի գտնու, կը բա-

- 11 - Գաղ Եպիսկ. Վանանդի
- 12 - Բասիլ Եպիսկ. Մոկաց
- 13 - Եղբայր Եպիսկ. Անճեւացեաց
- 14 - Տանատ Եպիսկ. Տայֆի
- 15 - Բասուն Եպիսկ. Տուրուբերանի
- 16 - Զաւէն Եպիսկ. Մանանդի
- 17 - Եղիշէ Եպիսկ. Ամատունեաց
- 18 - Երեմիա Եպիսկ. Ապահունեաց
- 19 - Ղեւոնդ Երէց Վանանդի
- 20 - Խորէն Երէց Մրէնի
- 21 - Դաւիթ Երէց
- 22 - Ուրիշ Երէցներ
- 23 - Աւագ Վանականներ (Վանահայրեր),
որոնց մէջ կար նշանաւոր Տէր Ա-
ղան, եղբայր Մերութան Արծրու-
նիի եւ Խոգեւոր Կայր Ղ. Փարպե-
ցիի:

Բ. - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նախարարներ, Աւագ Տանուտէրեր,
Աւագ Սեպուհներ¹³)

- 1 - Վասակ Սիւնիֆի Տէր եւ Մարգպան
Հայոց աշխարհին
- 2 - Վարդան Մամիկոնեաններու Տէր եւ
Ընդհանուր Սպարապետ Հայոց
- 3 - Ներշապուհ Արծրունիներու Տէր
- 4 - Գիւտ Վահեւունիներու Տէր¹⁴
- 5 - Արտակ Մոկաց Տէր
- 6 - Շմաուն Անճեւացեաց Տէր
- 7 - Մանէն Ապահունիներու Տէր*
- 8 - Առաւան Վանանդի Տէր
- 9 - Արշալիր Արշարունիներու Տէր (Կամ-
սարական)
- 10 - Վահան Ամատունիներու Տէր

աւանանայ միայն ըսելով. «Այս ամենայն Եպիս-
կոպոսք... հաւանութեամբ նախարարացն եւ ամե-
նայն բազմութեամբ աշխարհին արարին նամակին
պատասխանի»:

14 Աստղանիշ անունները յետագային, ուրիշնե-
րու հետ, գործակիցներ եղան Վասակ Սիւնիի: -
Եղիշէ, 142-43/178-79: - Ղ. Փարպեցի, 209:

բուժիչները ու բանակները Վարդանի հրամանին պատրաստ պիտի սպասեն ընդհանուր ապստամբության հռչակելու:

Մեծ խրախճանքներու մէջ կը տօնուի կեղծ ուրացութեան օրը, կը պարզեւատրուին ուրացողները, որոնցմէ իւրաքանչիւրը շողմանկան խօսքերով կը կրկնապատկէ Յազկերտի դժոնդակութիւնը: Իսկ Վարդան կը յայտարարէ երկրիմարար: «Աստուծոյ օգնութեամբ այնպիսի դործ մը պիտի կատարեմ, որ ոչ թէ միայն ձեր Արեւաց առջեւ, այլ մինչեւ Բիւզանդիոնի կայսեր ու բոլոր աղբերուն առջեւ պիտի պատմուի յաւիտեանս յաւիտենից»¹⁷:

5 - ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Պատուիրակութիւնները իրենց երկիրները կը վերադառնան, ընկերակցութեամբ մոզական դժուրերու, որոնք միասին չալկած կը բերեն Զարդաշտի օձերու եւ մոզանքներու, դորտերու եւ դոմէններու օրինադրքերը եւ պարսիկ անբարոյ մատենաները, յարմարեցնելու մեր երկրին, եւ միւս կողմէն ճամբու վրայ կը մտածեն ոսկի եւ հարստութիւն կողոպտելու մասին: Զիաւոր սուրհանդակ մը Հայաստան կը հասցընէ նախարարներու հասնելուն լուրը: Երկրին գլուխ մնացած են հայ եպիսկոպոսները, որոնք երկրին բոլոր կողմերը լուրերը զրկելով, ոտքի կը հանեն ժողովրդային հսկայ բանակ մը, կազմուած նախարարներուն զաւակներէն, շինականներէն, եկեղեցականներէն եւ նոյնիսկ կիներէն: Ծանօթ է եղած անհաճոյ ընդունելութիւնը: Երկրին այս ընդհանուր խռով վիճակին վրայ՝ անհանդիստ է Վարդանի խիղճը, կ'անէ ընտանիքը եւ Հայկակ ու Համազասպ եղբայրները, եւ ճամբայ կ'ելլէ անցնելու յունական իշխանութեան սահ-

17 Ղ. Փարպեցի, 153-169:

մանները, հոն կարենալու համար իր բարի խղճին համաձայն ապրիլ: Վասակ Սիւնի երեք եկեղեցականներ ու երեք իշխաններ զրկելով ետեւէն, կը յաջողի զինքը վերադարձնել: Միաժամանակ նենդաւոր Սիւնեցին կը դործակցի մոզերուն, եւ կ'աշխատի իրեն կողմնակից նախարարներ ու եկեղեցականներ սիրաչափ: Վարդանի կողմնակից իշխաններ կը ձերբակալեն Վասակ Սիւնին, չեն խարուիր թէ եւ անոր «մեղայն»ներէն, բայց Աւետարանի երդումին վրայ ադատ կ'արձակեն, մինչ անիկա կը շարունակէ աղղային ճակատը քանդել:

Վահան Ամատունի գլուխ անցած միւս նախարարներուն ու եկեղեցականներուն, կը դրդէ Վարդանը, որ պարզէ ապստամբութեան դրօշը, բայց անիկա դեռ չափազանց բարութեամբ կը խորհի Վասակ Սիւնի երկու զաւակներուն (Բաբիկ եւ Ամիր-ներսեհ) եւ Աշուշայ Բղէշի մասին, որոնք պատանդ կը պահուին Տիգրոսի մէջ: Վահան Ամատունի անձնական հաշիւ մըն ալ ունի Վասակի հետ: Կը խորհի որ ապրումամբութեան լուրը Պարսկաստան հասնելուն, հոն Վասակի պատանդ զաւակները պիտի սպաննուին, իսկ ինքն ալ, Վասակ, պիտի սպաննուի հայերէն, եթէ չմիանայ ապստամբութեան:

Վարդան կը սպասէ դարնան տաք օրերուն:

6 - ԱԶԳԱՅԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Կը հասնին տաքերը, 449 տարին: Վարդան իր մարդիկը առած Բաղրեւանդ դաւաճը կու գայ, Ծաղկոտն մեծ գիւղաքաղաքը, Անդղ բերդին մօտերը, եւ հոն կը դնէ իր բանակատեղին: Երկուշաբթի մըն է: Մոզպետը իր մոզական դուռով եկեղեցիին դուռը քանդելու պիտի ձեռնարկէ: Լուրը շուտով կը տարածուի, վրայ կը հասնի հայ ամբոխային բանակ մը, դը-

լուխ ունենալով Վանանդի համբաւաւոր ժողովրդական հերոս երէցը Ղեւոնդ, եւ բահերով ու քարերով կը ջարդեն մոզերու զլուխները, փախուստի մատնելով զանոնք:

Մոզերուն առաքելութիւնը կը սկսի ձախողել Հայաստանի մէջ, ամէնքէն կը հաւածուին, ուրացող կարծուածներն անգամ չիրենք տուններին չեն ընդունիր, ոչ ոք չիրենք սեղանակից կ'ընէ, եւ սովամահ ըլլալու վիճակի մէջ են եւ Տիգրոս կը դըրեն իրենց կացութիւնը, եւ հայերուն ապրումամբական շարժումները:

Վարդան կը խորհի որ պարսիկները կըրնան զիրենք կանխել, կը փութայ վճռական կարգադրութիւններու անցնել: Վասակէն կարգադրութիւններու անցնել, Շահապադանի՝ խորհուրդի կը հաւաքէ, երէցներ, պիվանի մէջ, եպիսկոպոսներ, եւ կը աւազ տանուտէրեր եւ սեպուհներ: Վարդան անոնց երկրին կացութիւնը: Վասակ լրտեսներէն մին, Զանդաղան մը, Ոստան տոհմէն, լուրերը կը հասցնէ Վասակի: Հայ իշխանները կը բռնեն մատնիւն, որ Արծալ գիւղը ապստամբած էր, եւ հոն ամբոխին կողմէ քարկոծուելով կը զոնէ իր արժանաւոր մահը:

Նախարարները կը դիմեն Վասակի, եւ կը ստիպեն զայն որ միանայ իրենց: Նախարարներ, աւազ սեպուհներ, իշխաններ, եպիսկոպոսներ ու երէցներ խմբուած են, եւ ժողովրդական բանակ մը, որ կանոնաւոր բանակի մը տեսքը չունի տակաւին: Նաւոր բանակի մը տեսքը կ'ըլլայ սա. «Եղու քաղաքական օրէնքը կ'ըլլայ սա. բոլոր ձեռքը իր հարազատին վրայ ըլլայ, եթէ անիկա ուրացած մըն է, հայրը իր զաւակին չխնայէ եւ փոխադարձ, կ'ընէ կողով իր ամուսինին դէմ, ծառան դառնայ ու իր ամուսինին դէմ, մատուցած ծառայութիւնը չգնահատուի: Աստուածային օրէնքը թաւր խրոջ դէմ: Աստուածային բանի վրայ, եւ այս օրէնքը համաձայն պատժութիւն բոլոր յանցաւորները»¹⁸:

Կամաւորներու այս բանակը, զինուած

սուրբով եւ այլ պատահական ունէ միջոցներով, առանց նախարարներու հրամանին սպասելու, կը յարձակի կրկին անգամ Զարհաւանի մոզերուն ու կրատունապետ վրայ, եւ կը ջարդէ ու կը քանդէ ամէն ինչ:

Աւելի ուշ Վարդան իր կանոնաւոր բանակով կը յարձակի ու կը դրաւ բոլոր այն վայրերը, ուր ապստամբական կեդրոններ կային պարսիկ պահակազուրկութեամբ: Այսպէս մէկիկ մէկիկ հսկողութեան տակ: Այսպէս մէկիկ մէկիկ կը դրաւ Վանանդի ամէնքէն առաջ Հայաստանի մայրաքաղաքը Արտաշատ, Գառնի, Անի մայրաքաղաքը Երզրաֆաղաֆները, Երկայ-եւ Արտագերս բերդաֆաղաֆները, Երկայ-նորդ, Արինի, Բարձրաբուխ, Խորանիստ, Մալխանիստ, Ողակամ, Արբանեալ, Վան, Ծախանիստ, Ողակամ, Արբանեալ, Վան, Գրեալ, Կապադոքի, Որոտ եւ Վասակաշատ: Գրեալ, Կապադոքի, Որոտ եւ Վասակաշատ: Պարսիկ պահակազուրկութեամբ առաջնորդներէն շատեր իրենց ընտանիքներով մէկտեղ կը ջարդուին, անոնց կողոպտած զանձերը կը ջարդուին, երկրի կը մաքրուի ունի եկեղեցիներուն, երկրի կը մաքրուի պարսկական աղտոտութիւններէն, եւ սըր-բաղդուած վայրերուն վրայ կը կանգնի Գրիստոսի խաչը¹⁹:

Որքան մոլեռանդ նոյնքան իմաստուն է ճարահատ Մոզպետը: Իր առաքելութեան մասին կը պատրաստէ տեղեկագիր մը Յազկերտի զրկելու, եւ զայն համոզելու Յազկերտի զրկելու, եւ զայն համոզելու: որ ետ կենայ իր մտադրութիւններէն: Կ'ըսէ. «Եթէ նոյնիսկ մեր աստուածներն ալ մեզի օգնութեան դան, կարելի բան չէ մոզութեան օրէնքները տարածել հայերուն մէջ: Հայերը մարդիկ են որ իրենց մերձակային անգամ չեն խնայեր, իրենց անձինքն ալ չեն խնայեր: Մարդիկ որոնք տանջանքալի են ամենեւին վախ չունին, եւ ինչ որ ներքին ամենեւին վախ չունին, եւ ինչ որ ամենեւին գէշ է՝ մահը կեանքէն կը նախընտրեն...»: Մինչ Վասակ մոզպետէն ընտրեն...»:

18 Եղեւէ, 108:

19 Ղ. Փարպեցի, 186-195: - Եղեւէ, 111-133:

Մամիկոնեանը արդէն կասկածներ ունէր, եւ դուցէ ասոնցմէ ըլլան կռուի պահուն վատարար նահանջող Վատակեանները:

Պարսիկ Հրամանատարը եւս, Մուշկան Նիւսալաուրտ, կը կատարէ իր հսկայական բանակին յարդարումը: Տղմուտի շըրջափակին երկայնքին, դետին հետեւողութեամբ կը շարունակէ զօրադուները:

Առաջին դէրին վրայ է փղերամակը: Իւրաքանչիւր փղի աջին ու ձախին 3000 պարսիկ սպառազէններ կը տեղադրուին: Փղերամակին առաջնորդն է Արտաշիւր:

Ընդհանուր Հրամանատարը իր շուրջը կ'առնէ պարսկական բանակին ընտրանին, Մատեան Գուռը, որ անմատչելի բերդի կը վերածէ պարսկական շարքերուն կեդրոնը:

Իսկ Օտարներուն Փաղանգը (Ապարհա-էիկ, որ տեսակ մը պարսկական légion étrangère-ն է, բաղկացած Կատիչներէ, Հոններէ եւ Գեղերէ) կը շարէ Մատեան Գուռըին աջակողմը, Վարդանի զօրախնին դէմ:

Օգնական զօրավարներէն է նաեւ Ատրոք-միդդ, որ պատերազմէն յետոյ Յագկերտէն մարզպան կը կարգուի նուաճուած Հայ աշխարհին:

Ու երբ պատրաստութիւնները կը լրանան, Ընդհանուր Հրամանատարը կը խօսի իր զօրքերուն: Բայց մինչ Վարդան ու Ղեւոնդ կը խօսին կրօնքի ու Հայրենիքի եւ զաղափարական մահուան մը մասին, պարսիկ Հրամանատարը կը խօսի պատերազմէն փախչողներուն պատիժներուն, մահապատիժի, ինչքերու դրաւումի եւ ընտանիքի ու զաւակներու աքսորի մասին, եւ հարստութիւններու, ոսկիի եւ արծաթի վարձատրութիւններու մասին:

Երկու կողմերը փողերու պաշտօնական ազդանշանին կը սպասեն յարձակողականի անցնելու համար: Քիչ ետք կը ծագի աւերը, նշանը կը տրուի, եւ երկու կողմե-

րէն պատրաստուած կատաղութեամբ կը սկսին զինարձակութիւնները: Կռիւր տակուն հետուէն է, նետաձիգ աղեղնաւորներն են որ դործ կը տեսնեն առաւելապէս:

Հայկական ձիաւորները կ'անցնին գետը, եւ զերկընդխառն կռիւները կը սկսին Տղմուտի արեւելեան ափին վրայ, եւ կը շատնան մեռելներ ու վիրաւորներ: Այս առաջին բախումին չիթի կը մատնուին պարսիկ զօրադուները, եւ հայերուն են սկզբնական յաջողութիւնները:

Պարսիկ Մատեան Գուռը կը խախտէ հայերուն ձախ թեւը: Օղնութեան կը փոթայ Վարդան իր քաջերով, կը դարնէ պարսիկ աջ թեւը, նահանջի կը պարտադրէ անյաղթելի Մատեան Գուռը, եւ քիչ կը պակսի որ պատերազմի վճռական բախտը դառնայ հայերու կողմը, եթէ պարազայ մը չգայ կերպարանափոխ ընելու ամէն ինչ:

Կռուի բախտորոշ տաք վայրկեանին Վատակեան վատերու խումբը իր առաջնորդին հրամանին վրայ կը բաժնուի հայկական շարքերէն, եւ կ'անյայտանայ բլուրներու ու հովիտներու մէջ, մինչ Վատակ հաղիւ ինքզինքը կ'ազատէ փղերու ետեւ:

Կողմերու հաւասարակշռութիւնը խախտած է, եւ պատերազմին ընթացքը կը փոխուի: Հայ զօրքերուն փետեկտումէն կ'օգտուի պարսիկ Հրամանատարը, Մուշկան, կը քաջալերէ իր զուգերը, եւ գառնը կը համախմբէ Վարդանի դէմ, միւս կողմէն հրաման կու տայ Արտաշիւրի որ առաջ գայ իր փղերով ու յառաջամարտիկներով, եւ կը շրջապատեն Վարդանը եւ իր փոքր խմբակը: Մէկի դէմ տասը զարնելով՝ կ'իյնան Վարդան եւ իր ընկերները հերոսաբար:

Ճակատամարտը կը վերջանայ արեւմուրէն քիչ առաջ, Վարդանի եւ զուգերուն առաջնորդ ութ զօրավարներուն եւ անոնց ղինուորներուն մարտիրոսական մահով, և մնացած հայկական բանակին ցրումով:

դէպի Հայաստանի ապահով ամբողջիւնները:

Հայ անդլուի բանակները կը նահանջեն ու կը հետապնդուին պարսիկներէն: Անհա-նու կը հետապնդուին պարսիկներէն տակաւին տակաւին կռիւներ տեղի կ'ունենան տակաւին ձորերու ու հովիտներու մէջ, իրարու հանդիպող հակառակորդ կողմերուն միջեւ: Մինչեւ որ հայ իշխանները կը յաջողին մը-նացած մասերը փրկել ու առաջնորդել Արաբաւան եւ ապահով նահանջներու ամբողջիւններուն ու բերդերուն մէջ, եւ այդ տեղերէն կը սկսին ինքնապաշտպանութեան կռիւները պարսիկ կանոնաւոր բանակներուն դէմ, մինչ Հայ Ժողովուրդը իր քա-րուն կողքին միասնաբար կը շարունակէ կրաւորական ղեմադրութիւնը պարսիկ կառավարիչներուն դէմ²⁸:

Եղիշէ եւ Փարպեցի համաձայն են Ար-տաղի ճակատամարտին մէջ հայ ինքնուշե-րու թիւին մասին, կը տարբերին միայն անոնց դասաւորումով:

Եղիշէի համաձայն Վարդանի եւ Տղ-մուտի ղինուորներուն հետ կ'իյնան 287 ղինուոր, բաղկուածներուն հետ կ'իյնան 287 ղինուոր,

մինչ Փարպեցիի համաձայն 276: Պատե-րազմէ դուրս գերի բռնուելով դաշտերէն ու ամրոցներէն կը սպաննուին 750 հոգի ու ամրոցների համաձայն, մինչ Եղիշէ 740 կը փարպեցիի համաձայն, մնաց յստակօրէն ըսե-ղնէ ասոնց թիւը, առանց յստակօրէն ըսե-լու թէ պատերազմի դաշտին վրայ եւ պա-տերազմէն դուրս մեռան ասոնք, կ'ըսէ մի-այն «Մեծ Պատերազմին միեւնոյն օրուան մէջ»:

Բացի ասկէ, Եղիշէ մանրամասնութիւն-ներ կու տայ իւրաքանչիւր զօրադուի ներսէն ինկող ղինուորներու մասին: Իսկ տոհմէն ինկող ղինուորներու մասին: Իսկ փարպեցիի համաձայն է Եղիշէի հետ հա-մադումարին մէջ (1036 հոգի), բայց մէկ մադումարին մէջ (1036 հոգի), բայց մէկ թիւի նուազ մը ունի խումբերէն մէկուն մէջ (տե՛ս իր դասաւորումը):

9. - ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
Պատերազմի դաշտին վրայ կ'իյնայ Հա-յոց Ընդհանուր Սպարապետը, Վարդան յոց Ընդհանուր Սպարապետը, Մամիկոնեան, Տ Առաջնորդ Ջօրավարներ, եւ 1027 ղինուորներ: Հոս կը դնենք երկու ցանկ Եղիշէի եւ Փարպեցիի.

ՓԱՐՊԵՅԻ ԴԱՍԱՆՈՐՈՒՄ

Ա.

- 1 - Վարդան Մամիկոնեան
- 2 - Խորէն Խորխոռունի
- 3 - Արտակ Պալունի
- 4 - Տաւատ Գեքունի
- 5 - Հմայեակ Դիմաֆեան
- 6 - Ներսէս Բաջրեքունի
- 7 - Վահան Գնունի
- 8 - Արսէն Ընծայեցի
- 9 - Գարեգին Սրուանձուեանց

Գումար՝ 9

Բ.

Պատերազմի դաշտին վրայ մեռնող ղինուորներ 276

ԵՂԻՇԷԻ ԴԱՍԱՆՈՐՈՒՄ

Ա.

- 1 - Վարդան Մամիկոնեան (Քաջ)
- 2 - Խորէն Խորխոռունի (Կորովի)
- 3 - Արտակ Պալունի (Արի)
- 4 - Տաւատ Գեքունի (Ջարմաղալի)
- 5 - Հմայեակ Դիմաֆեան (Իմաստուն)
- 6 - Ներսէս Բաջրեքունի (Հրաշակեքտ)
- 7 - Վահան Գնունի (Մանուկ)
- 8 - Արսէն Ընծայեցի (Արդար)
- 9 - Գարեգին Սրուանձուեանց (Յառաջա-)

Գումար՝ 9

Բ.

- 1 - Մամիկոնեան տոհմէն 133
- 2 - Խորխոռունիներու տոհմէն 19
- 3 - Պալունիներու տոհմէն 57
- 4 - Գեքունիներու տոհմէն 19
- 5 - Դիմաֆեաններու տոհմէն 22

28 Ղ. Փարպեցի, 226-227: - Եղիշէ, 227-233:

- 6 - Գաղթերունիներու տոհմէն 7
- 7 - Գնունիներու տոհմէն 3
- 8 - Ընծայեցիներու տոհմէն 7
- 9 - Սրուանձտեանց տոհմէն 20

Գ.

- 10 - Արծրունի եւ Արքունի եւ միւս
նախարարական տոհմերէն 740

Ընդհ. համագումար՝ 1036

Պարսիկներու կողմէ կ'իյնան 3544 հո-
դի, որոնցմէ 9 հոգի իշխանական տունէ
են: Բազմատուութիւն մը երկու կողմէն պա-
տերազմի դաշտին վրայ ինկողներուն մի-
ջեւ, ցոյց կու տայ, թէ պարսիկներունը
12 անգամ աւելի է հայերէն:

Պատերազմի վերջաւորութեան պարսիկ
Ընդհ. Հրամանատարը, Մուշկան Նիւսա-
ւաւորտ, յաղթականի պարծանքով Տիզ-
բոն կը զրկէ տեղեկագիր մը պատերազմի
արդիւնքի մասին: Բայց խորամանկ ար-
քան ինկողներու թիւին կը նայի, ու տես-
նելով պարսիկներու կողմէն ինկողներուն
անհամեմատօրէն շատութիւնը, կը զայրա-
նայ, եւ Ընդհ. Հրամանատարը Տիզբոն կը
կանչուի հաշիւ տալու²⁹:

- 10. - ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ԲԱՆՈՒՄՆԵՐ
ՀԱՅ ԱՐԶԱԿԱԶԷՆՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՐՍԻԿ
ԿԱՆՈՆԱԻՈՐ ԳՈՒՆԴԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Տխուր է Յազկերտ: Շուրջը կը պահին
իր կայսրութեան պաշտպան լաւագոյն
պարսիկ քաջերը: Չկայ իր սիրելի Մամի-
կոնեանը իր ընկերներով, որոնք այնքան
անգամներ իրենց անձին վտանգով կռուե-
ր

29 Եղեւէ, 233-235: Ինչ զօրագլուխներուն տըր-
ուած մակդիրները Եղեւէն են: Թիւ 9-ի Սրուանձ-
տեանց կողմէն 20-ին 2-ը Գարեգինի զաւակներն
են: - Ղ. Փարպեցի, 227-229:

- Պատերազմէն դուրս ամբոցներէն 750
գերի բռնուած ու սպաննուած

Ընդհ. համագումար՝ 1035

էին պարսկական կայսրութեան շահերուն
համար:

Հայաստան կը զրկուի պարսիկ Մարդ-
պան մը, Ատորմիկը, որ կը սկսի գործա-
դրել Յազկերտի «սիրով նուաճելու» նոր
քաղաքականութիւնը: Պարսիկ մարդպանի
մը նշանակումը կը նշանակէ թէ գործնա-
կանին մէջ վերջ գտած է հայ մարդպանին
պաշտօնը, Վասակ Սիւնի գործնականապէս
սկսած է երեսէ իյնալ, եւ թէ Հայաստան
իրը զէնքով նուաճուած երկիր՝ նաեւ զին-
ուորապէս կ'անցնի Տիզբոնի տիրապետու-
թեան տակ, իբրեւ մէկ նահանգը պարս-
կական կայսրութեան:

Պարսիկ մարդպանը երեւութապէս խա-
ղապէս է, բայց հրահանգ ունի վերէն
սիրով նուաճելու հայ ժողովուրդը, իսկ
զէնքի ուժով՝ հայ ղեմադրող արձակագէն
զինուորականութիւնը:

Հմայեակ Մամիկոնեան, Վահան Ամա-
տունի եւ Մերուժան Արծրունի պատուի-
րակները Բիւզանդիոնէն կը վերադառնան
ձեռնունայն: Վերջացած է արդէն բախու-
րոշ պատերազմը, չկայ Հմայեակի եղբայ-
րը Վարդան եւ իրենց զէնքի միւս ընկեր-
ները, եւ իրենք արժանի չեղան զէնք առ-
նել իրենց նահատակ ընկերներու կողքին:
Իրենց համար ապրիլը այլեւս նշանակու-
թիւն չունի, կը բարձրանան հայկական
ամբոցները, ուր արդէն խմբուած են հայ
արձակագէտները, միւս նախարարներուն,

սեպուհներուն եւ Յովսէփ Կաթողիկոսի,
Ղեւոնդ Երէցի եւ միւս հոգեւորականնե-
րուն հետ, եւ այդ ամբողջութիւններու վրա-
յէն կը շարունակեն չաւարտած պայքար
մը, նեղելով պարսիկ զրաւման բանակ-
ները:

Հայ Դիմադրականութեան գլխաւոր ղե-
կավարն է Հմայեակ Մամիկոնեան, իսկ
ղեմադրական գլխաւոր բոյներն են ամբու-
թիւնները:

ա) Տայֆի - ուր պարսիկները կը կար-
ծէին թէ պահուած ըլլան հայ նախարար-
ներու գանձերը:

բ) Խաղտիֆի - ճանչցուած իբր անթա-
փանց «անլոյս» երկիր:

գ) Տմորիֆի - նշանաւոր իբր «անմա-
տոյց»:

դ) Կապոյտ լեռան - որուն անմիջական
մօտիկն է Արտագերսի հոգեւոր ամ-
բոցը:

ե) Արցախի - նշանաւոր իր մայրինե-
րուն «թանձրախիտ» անտառներով: Հոս
ապաստանած հայկական զունդը պատգա-
մաւորութիւն մը կը զրկէ Հոններուն զէմ:
Եւ զիջող զանոնք հանել պարսիկներուն զէմ:
Այս առիթով անոնք կ'իջնեն ու կը քանդեն
Սյս առիթով անոնք կ'իջնեն ու կը քանդեն
հալը, որ Յազկերտ Բ. ի այնքան աշխա-
տանք եւ արիւն արժած էր:

Հայերուն զէմ պարսիկ զունդերուն կ'ա-
ռաջնորդեն նաեւ երկու ուխտադրուժ հայ
իշխաններ, Արտէն Արեղեան (Գարեգեան)
եւ Վարազշապուհ Պալուցի, իրենց հետ

30 Եղեւէ, 296: - Պարսիկ Մոզպետը, որուն
յանձնուած էր գերեզմաններուն պահապա-
նութիւնը, նախ քան իր դարձը դէպի քրիստոնէ-
ութիւն, տեսիլքի մէջ կը տեսնէ այս 213 նահա-
տակները Արտաղի մէջ ինկողներուն հետ: Իսկ
հազար «գերեզման» եւ գերիցքը գրեթէ անհայտ
օրինակութիւն է, ըլլալու է «գերեզման»
233-238/272-273:

ունենալով Վասակէն տրամադրուած Սիւ-
նիքի զինուորները:

Հմայեակ անցեալի ապարդիւն փորձերը
աչքի առջեւ ունենալով հանդերձ, յետին
յուսահատական կոչ կ'ուղղէ յոյն Բիւզան-
դիոնի, բայց նախկին անտարբերութեան
կ'արժանանայ: Եւ Տայֆի կռիւներու ըն-
թացքին, Պարսիս լեռան ստորոտը Որջն-
հաղ գիւղին մօտ պարսիկ զունդերու հետ
բախումի մը ընթացքին՝ կը մեռնի Հմայ-
եակ Մամիկոնեան:

Ուրիշ բերդի մը մէջ ապաստանած են
313 հայ զինուորականներ, հոն է նաեւ Ղե-
ւոնդեաններու խումբը: Պարսիկ զօրազը-
լուխը անձնատուութեան կը հրաւիրէ բեր-
դապահները: Հայ զօրական մը, Բակ ա-
նունով, անվախօրէն պարիսպին վրայ ե-
լած կը վարկաբեկէ պարսկական ստու-
թիւնները, եւ նոյն գիշերը միասին առած
700 զինուոր կ'իջնէ բերդէն, եւ ճեղքելով
ապահար պարսիկ պաշարման գունդը,
կ'երթայ կը հեռանայ: Իսկ մնացածները,
213 հոգի, չհաւատալով թէ եւ պարսիկ զօ-
րավարին խաբեայ խոստումներուն, բայց
կերակուրի ամէն պաշար վերջացած ըլ-
լալով կը հարկադրուին կամովին իջնել ու
յանձնուիլ թշնամիին, որ գերի պահելով
հոգեւորականները, տեղին վրայ կը դը-
խատէ 213 հայ զինուորները, որոնք կըր-
նան աւելցուիլ Արտաղի նահատակներուն
վրայ, ըլլալով անոնց ընկերները³⁰:

Ատորմիկը եւ Վասակ Սիւնի սուտերով
ու զաւաճանութիւններով կը ձերբակալեն
ու հետեւեալ հայ նախարարները, իշ-
խանները եւ հոգեւորականները, ու դա-
նոնք կը զրկեն Տիզբոն³¹:

Ա.

- 1 - Բաբկէն Սիւնի
- 2 - Բակուր Սիւնի (եղբայր Բաբկէնի)
- 3 - Ներշապուհ Արծրունի*
- 4 - Շաւապ Արծրունի
- 5 - Շնդին Արծրունի

խղճին ու երկրին անկախութեան, օրհնեցին հայ սուրբ, քաջութիւն ներշնչեցին առաջնորդներուն ու զինուորներուն, եւ իրեց մահով բթացուցին պարսկական սուրբ, եւ խաղաղութիւն տուին հայ աշխարհին:

Ղեկնադեաններու խումբին մաս կը կազմեն Խորէն եւ Աբրահամ երէցները: Ասոնք կը տարուին Ասորեստանի Շարուլ աւանը, ահանջին կը կտրուին եւ տաժանակիր աշխատանքի կը դատապարտուին: Խորէն չուտով կը վախճանի աշխատանքին սպառումէն, իսկ Աբրահամ կը փրկանաւորուի հայ վաճառականներու զրամով, կը վերադառնայ Հայաստան, Բյուզնդաց դաւառին Եպիսկոպոս կը ձեռնադրուի, եւ բարիքներով ու սրբութեամբ կը կնքէ իր վշտակիր կեանքը:

Ղեկնադեան քահանաներու նախատակութեան մանրամասնութիւնները խոստովանելով ծածուկ քրիստոնեայ վաճառականը, որ ջորեպանի տարազին տակ վեհադեպոսէի կ'ընկերանայ իրր ճամբաներու առաջնորդ, կը հաղորդէ Արշաւիր Կամսարականի, որ իր կարգին ուրիշ տեղեկութիւններու յաւելումներով կ'անցընէ Փարպեցիին³⁷:

Իսկ Վասակ Սիւնիի վերջը կ'ըլլայ այն, ինչ որ կ'ըլլայ ընդհանրապէս հայրենիքի դաւաճաններուն եւ մատնիչներուն վերջը, որոնք հայրենիքէն կ'անիծուին, թշնամի կողմին ոտքը լողդ գերինները կը դառնան, դուրկ ամէն արժանապատուութենէ, ու վստահութենէ, եւ հուսկ մութ անկիւնի մը մէջ, խղճի խայթերէ եւ իրենց անմեղ զոհներուն խռով տեսիլներէն տանջուած, լքուած ու մոռցուած ամէնքէն, կ'իյնան թափուած արիւններուն անէծքի հարուածին տակ, անիծուած եւ Աստուծոմէ եւ մարդերէն:

Ծանօթ է, թէ երբ Ղեկնադեան քահանաներու խումբը ջորեպանի տարազին տակ վեհադեպոսէի կ'ընկերանայ իրր ճամբաներու առաջնորդ, կը հաղորդէ Արշաւիր Կամսարականի, որ իր կարգին ուրիշ տեղեկութիւններու յաւելումներով կ'անցընէ Փարպեցիին³⁷:

37 Եղեւէ, 315-362: - Ղ. Փարպեցի, 237-343:

նաներու խումբը ջորեպանի տարազին տակ վեհադեպոսէի կ'ընկերանայ իրր ճամբաներու առաջնորդ, կը հաղորդէ Արշաւիր Կամսարականի, որ իր կարգին ուրիշ տեղեկութիւններու յաւելումներով կ'անցընէ Փարպեցիին³⁷:

Սիւնեցիին կէսօրուան ճաշին կ'ուզէ պահել քահանաները, բայց անոնք կը հրաժարին հրամայուած մահապարտի խնձորէն: Ծանօթ է խօսակցութիւնը, որ կ'անցնի Ղեկնադի ու Վասակի միջեւ, եւ որ կը վերջանայ Ղեկնադի անէծքով Վասակի դիտուն, եւ Վասակ խուճապահար առած իր խումբը, խեղացնոր ու մոլոր, կը մըտնայ իր ձին, եւ հալածական իր խիղճէն՝ կը դիմէ առիւծին որջը: Կը հասնի Տիգրոն, կը ներկայանայ արքային:

Յաղկերտ տխուր է՝ իր կայսրութեան պարսիկ եւ հայ լաւագոյն զինուորականներուն մահով, մողերուն ու զինուորներուն կոտորածով, իր սահմանադրութիւններուն խախտման քանդումով: Այս բոլորին վրայ՝ բոլոր մը հայ ժողովուրդին յամառ դիմադրութիւնը զինքը կը կատարեցնէ ամէնէն աւելի, այդ ժողովուրդը տակաւին կը շարունակէ զինքը մտաւորաբար, Հայաստանի դրաման բանակները կը շարունակեն ոտքի վրայ մնալ, սպառելով պետական դանձր, եւ միշտ ենթակայ յանկարծական յարձակումներու հայ արձակազէններու կողմէ: Տխուր է եւ կը փնտռէ մէկը, որ բոլոր այս ճախորդ անցուղարձերու պատճառներուն մասին ճշգրիտ եւ անկողմնակալ տեղեկութիւն մը տայ, պարսիկ արքան վստահութիւն չունի նոյնիսկ իր խորհրդականներուն ու մողերուն վրայ:

Քովն է դարձեալ իր արթուն պահակ, առաջին խորհրդական Միհրնեսեհը, որ կ'ըսէ արքային, թէ ամէն ինչ ստուգօրէն

կրնայ զիտնալ՝ միմիայն նոյնինքն Հայերէն³⁸:

Եւ հիմա հայ Հողեւորական ու Աշխարհական Ներկայացուցիչները, եւ քիչ մը աւելի ուշ կը բերուին նաեւ Յովսէփ Կաթողիկոս, Սահակ Եպիսկոպոս եւ Ղեկնադ թողիկոս, Սահակ Եպիսկոպոս եւ Ղեկնադ թողիկոս: Մէկ կողմը նստած է Վասակ Սիւնեցի: Մէկ կողմը նստած է Կանդանձնի, իրր ամբաստանեալ, դէմը կանգնած ճիւղ, իրր ամբաստանեալ, դէմը կանգնած է հայ նախարարներու կողմէ ներկայացուած փոստաբանը, Արշաւիր Կամսարական: Կամսարականը դէպքերուն, անձերուն եւ պատճառներուն մանրամասն ցուցադրութիւնը կ'ընէ, երեւան կը հանէ Սիւնեցիին «Երկու թելի վրայ» խաղալը, Տիգրոնի ու Բիւզնդիկոնի միջեւ եւ ներկայանէ իր մեծ ապշանքով՝ ծոցէն կը հանէ Սիւնեցիին կողմէ ստորագրուած ու անոր մատնիով կնքուած 5 նամակներ, իւր-Վիրերուն, Աղուաններուն, Աղծնիքի, Բիւզնդիկոնի կայսեր եւ յոյն Անտիոքոս Սպարապետին, որոնցմով Վասակ զինակցութիւններ կ'ուզէր փնքել: Ատոմ Գնունին եւ թիւններ կ'ուզէր փնքել: Կամսարականին, յայտնելով կը ճանակցի Կամսարականին, յայտնելով թէ ինքը անձամբ գտնուած է այդ նամակները տանող խումբին մէջ: Մէջտեղ կը հանուին Վասակի այն հրամանագիրները, որոնք ցոյց կու տային թէ ինքը մատուցէր Զարեհաւանի մողերուն ջարդին մէջ, ինչպէս նաեւ զանազան բերդերու դրամունքը պարսիկ պահակապետներու ձեռքէն: Վասակի ուրացակիցները եւ նոյնիսկ իր սահմանակիցները զինքը կը խնայէին իր հրամաններով:

Մէկ քանի օր վերջ մեծ ճաշկերոյթ կայ պարսիկ արքունիքին մէջ: Կոչուած են բոլոր երեւելի անձնավորութիւնները, կը հրաւիրուի նաեւ Վասակ, որ պատմիչին վկայութեան համաձայն, կը ներկայանայ «պատուական զէնքներով, կապած արքունական ապարօշը, գլուխն է ոսկեղէն խոյրը, կռանակուող ձոյլ ոսկի դօտին մէջ»:

Քին, օղերը ահանջը, ապարանջանները վերջին շարուած, եւ սամոյրէ մուշտակը ուսին» բոլոր հրաւիրեալներուն ամէնէն աչքառուն:

Հիւրերը նստած են արքունի պալատին մեծ ներքնապալատին մէջ: Դուրս կ'ելլէ արքունի Սենեկապանը մի առ մի ողջունելու զանոնք: Կարգը երբ Սիւնեցիին կու գայ, կ'ըսէ անոր, թէ իր թագաւորը զինքը զրկած է հարցնելու թէ ուսկի՞ց են վերջը զրկած այդ բոլոր քահանաները: Իսկ անոր կրած այդ բոլոր քահանաների Գահնաքի վերջ դուրս կու գայ արքունի պալատը, եւ բոլոր հրաւիրեալներուն ներկայութեան հանդիսաւորապէս կը վերցնէ այսօր վրայէն բոլոր արքունական պատուանոր վրայէն հանդերձանքը, կը նշանները եւ վայրուն հանդերձանքը, կը հաղուցեն մահապարտի ձեռքակ երկայն չափովը, ոտքերը ու ձեռքերը չափովը, կնքաբար զինքը կը նստեցնեն մատակ ձիւ մը վրայ, եւ կ'առաջնորդեն այնտեղ, ուր ինքը բնաւ չէր երազած - ոճրադործներու բանտը:

Յետոյ հաւանաբար կը հանուի բանտէն, կ'ապրի հսկողութեան տակ եւ իր խղճի խայթերուն հետ: Աւետարանին վրայ կախալթերուն հետ: Աւետարանին դրժումներէն տարուած երդումներուն արեւան բուրնիներուն եւ քահանաներուն արեւան բուրնիներէն, զարշնոտ հիւանդութիւններով, լքուած իր սիրելիներէն ու ձեռնարով, լքուած իր սիրելիներէն, կ'ապրի մոռցուած սուր սպասաւորներէն, կ'ապրի մոռցուած դեռ մէկ երկու տարի, եւ կը մեռնի «չան նման»:

«Այն որ թագաւոր ըլլալ կ'ուզէր անպիտանութիւններով - կ'ըսէ պատմիչը Եղիշէ - գերեզմանի մը անգամ արժանի չեղաւ: Արժանի չեղաւ իր յիշատակին համար մատուցուելիք սուրբ պատարագի մը, նոյնիսկ միայն թողուց իր ետեւէն իր յիշատակը»³⁹:

39 Եղեւէ, 252-276: - Ղ. Փարպեցի, 244-272:

